Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ ներդրումային ծառայությունների մատուցման վերաբերյալ

Տեղեկատվական ամփոփագիր

1. Ընդհանուր դրույթներ

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ն գրանցվել և լիցենզավորվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 30.05.2023թ, 30.05.2023թ, գրանցման համար՝ 25, ՀՎՀՀ՝ 02891578:

Սույն տեղեկատվական ներկայացնում է Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ-ի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների վերաբերյալ ամփոփ տեղեկություններ:

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ սպառիչ տեղեկություններ ստանալու համար բոլոր ցանկացողները կարող են այցելել ընկերության պաշտոնական կայք inviabroker.com կամ նամակ ուղարկել Ընկերության պաշտոնական էլ.հասցեին info@inviabroker.com, կամ զանգահարելով +374 55 212786 հեռախոսահամարով կամ այցելելով Հանրապետության 38 հասցեում գտնվող ընկերության գրասենյակ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 09:30-18:30: Տեղեկությունները հասանելի են հայերեն/ռուսերեն և անգլերեն լեզուներով:

2. Ներդրումային ծառայությունների ընդհանուր բնութագիրը

Բրոքերային ծառայությունները մատուցվում են հայաստանյան և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում ինստիտուցիոնալ ներդրողներին: Մեր միջնորդությամբ հաճախորդները կարող են արժեթղթերով գործարքներ կատարել ինչպես կարգավորվող, այնպես էլ չկարգավորվող շուկաներում:

Բրոքերային սպասարկման շրջանակներում կատարվում են հետևյալ գործառնությունները.

- Հաճախորդների համար բրոքերային հաշվի բացում,
- Աջակցություն «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում դեպո հաշվի բացման կապակցությամբ,
- Հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին գործարքների կատարում ՀՀ կարգավորվող և չկարգավորվող շուկաներում ինչպես նաև գլոբալ շուկաներում,
- Արժեթղթերի կարճ վաճառքների իրականացում,
- Արժեթղթերի մարժայով գնման իրականացում,
- Արժեթղթերի ընթացիկ գների վերաբերյալ տեղեկությունների ներկայացում,
- Արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում (այդ թվում՝ հեռացված տերմինալի միջոցով):

Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացակարգը կարգավորվում է հետևյալ իրավական ակտերով՝

- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենք:
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենք:
- ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07:
- ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 4/03:
- ՀՀ ԿԲ Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 282-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների միջոցների պաշտպանության կանոնները» Կանոնակարգ 4/12:
- ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշմամբ հաստատված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» Կանոնակարգ 4/06
- ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05
- ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի ապրիլի 08-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07:
- ՀՀ ԿԲ Խորհրդի 2007 թվականի ապրիլի 12-ի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեությունը» Կանոնակարգ 33
- Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ-ի Ծառայողական տեղեկությունների պահպանումը կարգավորող կանոններ
- Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ-ի Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգ
- Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ-ի բրոքերային(դիլերային) գործունեության կանոններ
- Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ-ի բողոքների հաշվառման և պահպանման կանոններ

3. Ծառայությունների դիմաց վճարումը

Մատուցվող բրոքերային ծառայությունների սակագները և հաճախորդների կողմից վճարումների կատարման կարգն ու պայմանները սահմանված են «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 27.06.2023թ-ի որոշմամբ, որը շահագրգիռ անձինք կարող են ստանալ մեր կայքից կամ այցելելով մեր գրասենյակ:

Եթե վերոնշյալ որոշմամբ այլ բան սահմանված չէ՝ բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով,

Վ=ԾԳ + Հ,

որտեղ Վ-ն ծառայության դիմաց գանձվող վճարի մեծությունն է, ԾԳ-ն տվյալ գործարքի իրականացման հետ կապված ծախսերի մեծությունն է, որը իր մեջ կարող է ներառել կարգավորվող շուկայի օպերատորի, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի այլ պահառուի և (կամ) ռեեստրավարի կողմից գանձվող գումարները, ինչպես նաև գործարքի իրականացման հետ կապված ցանկացած այլ ծախսեր, Հ-ն մեր կողմից կիրառվող հավելագինն է, որը յուրաքանչյուր գործարքի դեպքում սահմանվում է հաճախորդի հետ բանակցությունների արդյունքում:

Բրոքերային ծառայությունների մատուցման, ինչպես նաև հաճախորդների տերմինալային սպասարկման շրջանակներում Հաճախորդի՝ գնման պատվերների կատարման միջնորդավճարները հաճախորդը պետք է մինչեվ իր պատվերով գործարքի կամ այլ գործառնության կատարումը մուտքագրի

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ում իր համար բացված բրոքերային հաշվին, որից միջնորդավճարի գանձումը կկատարվի հաճախորդի պատվերով գործարքի կամ գործառնության կատարումից հետո:

Բրոքերային ծառայությունների մատուցման, ինչպես նաեվ հաճախորդների տերմինալային սպասարկման շրջանակներում հաճախորդի՝ վաճառքի պատվերների կատարման միջնորդավճարների գանձումը կատարվում է հաճախորդի պատվերով գործարքի կամ գործառնության կատարումից հետո՝ գործարքի արդյունքում ստացված գումարից պահելու միջոցով:

Ոչ ռեզիդենտ հաճախորդներից բոլոր վճարումները կարող են գանձվել վերոնշյալ սակագների արտարժույթային համարժեքով:

Վճարման ենթակա գումարները կանխիկ վճարելու դեպքում կլորացվում են 10 դրամի ճշտությամբ, ի շահ հաճախորդի:

4. Հաճախորդների հետ կապի իրականացման կարգը և ժամկետները

Հաճախորդների հետ կապն իրականացվում է նրա (նրա ներկայացուցչի) հետ անմիջական շփման, հեռախոսի, էլեկտրոնային փոստի, ինտերնետի կամ ֆաքսի միջոցով:

Հաճախորդների հետ կապի իրականացման կոնկրետ միջոցները ներառվում են նրանց հետ կնքված պայմանագրերում:

Հաճախորդների հետ կապը իրականացվում է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Հաճախորդները կարող են կապվել մեր հետ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:30-ից 18:30-ը:

5. Հաճախորդների պատվերների ներկայացումը և կատարումը

Հաճախորդի կողմից պատվերները կարող են ներկայացվել գրավոր:

Պատվերը ներկայացվում է հաճախորդի կողմից էլեկտրոնային փոստի, ինտերնետի կամ ֆաքսի, իսկ հաճախորդի ցանկության դեպքում՝ թղթային ձևով:

Թղթային ձևով պատվերը ներկայացնելու դեպքում հաճախորդի կողմից պատվերը տրվում է 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է մեզ մոտ, իսկ մյուս օրինակը «Պատվերը ընդունված է» նշագրմամբ և պատվերը ընդունելու իրավասություն ունեցող անձի ստորագրությամբ վերադարձվում է հաճախորդին փոստով, ֆաքսով, առձեռն կամ էլեկտրոնային փոստով (էլեկտրոնային փոստով ետ ուղարկված պատվերը պետք է արտապատկերված և կցված լինի ուղարկված էլեկտրոնային նամակին): Էլեկտրոնային փոստով, ինտերնետով կամ ֆաքսով հաճախորդի կողմից պատվերը տրվում է մեկ օրինակից, ընդ որում այդ օրինակը մնում է մեզ մոտ, իսկ հաճախորդը տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով տեղյակ է պահվում պատվերը ընդունված լինելու մասին:

Հաճախորդը կարող է ետ կանչել ներկայացրած պատվերը կամ դրանում՝ ըստ պատվերի քանակական, գնային կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել, եթե տվյալ պատվերով գործարք դեռևս չի կնքվել ընկերության կողմից: Պատվերի ետ կանչը կամ փոփոխությունը իրականացվում են պատվերը ներկայացնելու համար սահմանված կարգով:

Հաճախորդների պատվերները կատարվում են պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ՝ գործելով բարեխղճորեն, ի շահ հաճախորդի (ֆիդուցիար պարտականություն), ինչը նշանակում է, որ հաճախորդների պատվերները կատարվում են հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գործարքի ծավալը, գինը, կատարման ժամկետը և պատվերի այլ էական պայմաններից բխող առանձնահատկությունները:

Հաճախորդների պատվերները կատարելիս մեր աշխատակիցը պետք է՝

1. համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման

2. այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում

3. հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:

Մեր պատասխանատու աշխատակիցը պատվերի ընդունումից հետո կազմում է բրոքերային հայտերը:

Հաճախորդների կողմից ներկայացված պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման մեր դիլերային հայտերի նկատմամբ:

6. Հաճախորդներին հաշվետվությունների ներկայացումը

1. Եթե Ընկերությունը կատարել է հաճախորդի Պատվերը, ապա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը հաճախորդին տրամադրի Պատվերի կատարման մասին հաշվետվություն:

2. Հաճախորդի Պատվերի կատարման մասին հաշվետվությունը առնվազն ներառում է՝

1. Ընկերության անվանումը,

2. Հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,

3. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,

4. Գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,

5. Հաճախորդի կողմից տրված Պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),

6. Գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),

7. Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթերի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

8. Պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),

9. Պատվերի բնույթը, եթե Պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության, օպցիոնի իրականացում, ռեպո, հակադարձ ռեպո և այլն),

10. Արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),

11. Միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),

12. Ընդհանուր ծավալը,

13. Գանձվող միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),

14. Հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հաճախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),

15. Տեղեկատվություն այն փաստի մասին, որ հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ Ընկերության մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար,

16. Տեղեկատվություն գործարքից հետո Ընկերությունում Հաճախորդի ունեցած դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ՝ ըստ յուրաքանչյուր արժույթի:

3. Սույն կանոնի 6.1. ենթականոնով սահմանված հաշվետվությունը ներկայացվում է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ձևով:

4. Եթե հաճախորդի Պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը հաճախորդին է ներկայացնում Պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

5. Սույն կանոնի համաձայն հաճախորդին ներկայացվող հաշվետվությունը պետք է՝

1. ներառի հաշվետվության ներկայացման ամսաթիվը,

2. վավերացված լինի Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված անձի ստորագրությամբ և Ընկերության կնիքով:

6. Սույն կանոնով սահմանված հաշվետվությունները հաճախորդին ներկայացվում են առձեռն հանձնելու կամ Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով հաճախորդին ուղարկելու միջոցով:

7. Պայմանագրերի ժամկետայնությունը

Հաճախորդների հետ կնքվում են երկու տեսակի պայմանագրեր:

Այն դեպքերում, երբ հաճախորդը ցանկանում է կարճ ժամանակահատվածում կատարել սահմանափակ թվով գործարքներ, նրա հետ կնքվում է համառոտ պայմանագիր, որը գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը կամ պայմանագրի լուծումը: Ընդ որում, եթե հաճախորդը այդ պայմանագրի հիման վրա ներկայացնում է մեկից ավելի պատվերներ, ապա յուրաքանչյուր հաջորդ պատվեր չի կարող ներկայացվել նախորդ պատվերի դադարումից հետո մեկ աշխատանքային օրվանից ավելի ուշ:

Այն դեպքում, երբ հաճախորդը մտադրված է ընկերության հետ մտնել երկարատև գործարար հարաբերությունների մեջ՝ կատարելով անսահմանափակ թվով գործարքներ, հաճախորդի

հետ կնքվում է առավել հանգամանալից պայմանագիր, որը գործում է մինչև կողմերից մեկի կողմից լուծումը:

Պայմանագիրը լուծվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին են փոխանցվում նրան պատկանող արժեթղթերն ու դրամական միջոցները:

8. Ներդրման օբյեկտները

Այս ծառայության շրջանակներում հաճախորդների միջոցները հիմնականում ներդրվում են բաժնետոմսերում և պարտատոմսերում:

1. Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու համար ձեռնարկվող քայլերը

1. Ընկերությունում հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.

1. առանձնացված հաշվառում. Ընկերությունը առանձին հաշիվներ ունի յուրաքանչյուր հաճախորդի, ինչպես նաև իր և իր հաճախորդների արժեթղթերի և դրամական միջոցների համար,

2. ներքին վերահսկողություն. Ընկերությունն ունի ներքին աուդիտի անկախ ստորաբաժանում, որը իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության անընդհատ վերահսկողություն՝ նվազագույնի հասցնելով Ընկերության աշխատակիցների կողմից պատահական սխալների և չարաշահումների ռիսկը,

3. Պատվերների կատարման հստակ քաղաքականության կիրառում,

4. Ընկերության և հաճախորդների, ինչպես նաև Ընկերության տարբեր հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականության կիրառումը:

5. Մասնակցություն ներդրողների փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում (առկայության դեպքում):

2. Ընկերությունն իրավասու է օգտագործել հաճախորդների միջոցները ի շահ իրեն, եթե դա նախատեսված է Ընկերության և հաճախորդի միջև կնքված պայմանագրով:

3. Եթե Ընկերության և հաճախորդի միջև կնքված պայմանագրով նախատեսված է, որ Ընկերությունն իրավասու է օգտագործել հաճախորդի միջոցներն ի շահ իրեն, ապա պայմանագրով պետք է սահմանված լինի նաև.

1. միջոցների օգտագործման սահմանաչափերը,

2. միջոցների օգտագործման ժամկետները (առկայության դեպքում),

3. միջոցների օգտագործման դիմաց Ընկերության կողմից հաճախորդին վճարման ենթակա գումարի դրույքաչափը, դրա հաշվարկման կարգը և վճարումների իրականացման պարբերականությունը (եթե նման վճարում նախատեսված է):

4. Ընկերությունն իրավունք ունի գրավադրելու հաճախորդի միջոցներն իր անունից միայն վերջինիս հետ կնքված գրավոր համաձայնագրի հիման վրա:

Բաժնետոմսեր

Բաժնետոմսը արժեթուղթ է, որը թողարկում է բաժնետիրական ընկերությունն իր ստեղծման, վերակազմավորման, ինչպես նաև կանոնադրական կապիտալի ավելացման դեպքերում՝ դրամական միջոցների հավաքագրման նպատակով: Այսինքն բաժնետոմսը բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում ներդրված բաժնեմասի վկայությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն բաժնետոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը1:

Բաժնետոմսը շրջանառության կոնկրետ ժամկետ չունեցող արժեթուղթ է, որը, հավաստելով բաժնետիրական ընկերության սեփականությանը մասնակցելու փաստը, իր տիրոջը տալիս է մի շարք իրավունքներ, առավելություններ և լիազորություններ: Բաժնետոմսերը գոյություն են ունենում այնքան ժամանակ, որքան գոյություն կունենա այն թողարկած բաժնետիրական ընկերությունը, նման արժեթղթերի գործողության ժամկետը սովորաբար չի սահմանափակվում:

Բաժնետոմսին բնորոշ է հետևյալ առանձնահատկությունները՝

1. այն կարող է թողարկել միայն բաժնետիրական ընկերությունը,

2. սեփականության տիտղոսագիր է, այսինքն բաժնետոմսի տերը բաժնետիրական ընկերության համատեր է, դրանից բխող իրավունքներով,

3. չունի գոյության (մարման) ժամկետ, այսինքն բաժնետիրոջ իրավունքները պահպանվում են այնքան ժամանակ, որքան գոյություն ունի ընկերությունը (ի տարբերություն, օրինակ՝ պարտատոմսի): Սակայն սա չի ենթադրում, որ բաժնետոմսն այդքան ժամանակ կմնա միևնույն սեփականատիրոջ ձեռքում. բաժնետերը կարող է օտարել իրեն պատկանող բաժնետոմսը բորսային կամ արտաբորսային շուկայում,

4. անբաժանելի է, այսինքն դրա համատեղ տիրապետումը չի նշանակում սեփականության իրավունքի բաժանում, այլ նրանք բոլորը ներկայանում են որպես մեկ սեփականատեր,

5. բնորոշ է սահմանափակ պատասխանատվություն, քանի որ բաժնետերը պատասխանատու չէ բաժնետիրական ընկերության, իսկ ընկերությունն էլ բաժնետիրոջ պարտավորությունների համար, իսկ ընկերության սննկացման դեպքում բաժնետերը կորցնում է այնքան միջոց, որքան ներդրել էր բաժնետոմսը ձեռք բերելիս,

6. մեկ բաժնետոմսը որպես կանոն տալիս է մեկ ձայնի իրավունք,

7. բաժնետոմսերը կարող են միաձուլվել (կոնսոլիդացվել) և տրոհվել (բաժանվել): Բաժնետոմսերն ըստ որոշակի հատկանիշների դասակարգվում են հետևյալ կերպ՝

- ըստ ամրագրված իրավունքների պատկանելիության ձևի՝ անվանական և ըստ ներկայացնողի,
- ըստ թողարկման ձևի՝ փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) և ոչ փաստաթղթային (առանց ֆիզիկական կրիչի),
- ըստ քվեարկման իրավունքի՝ ձայնի իրավունքով և առանց ձայնի իրավունքի,
- ըստ շրջանառության ձևի՝ ազատ կամ սահմանափակ շրջանառու,
- ըստ իրավունքների ծավալի՝ հասարակ (սովորական) և արտոնյալ:

Որպես բաժնետերեր կարող են հանդես գալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում պետությունը, ինստիտուցիոնալ ներդրողները և այլն:

Բաժնետոմսը գրավիչ ներդրումային գործիք է թե՛ թողարկողի և թե՛ ներդրողի համար: Միաժամանակ այն ունի առավելություններ և թերությունները:

Ներդրողների տեսանկյունից՝ բարձր ներդրումային ռիսկերի, եկամտի ստացման անորոշության և այլնի հետ մեկտեղ, բաժնետոմսերը գրավիչ գործիքներ են, քանզի ապահովում են՝

ա) ներդրված կապիտալի դիմաց ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու իրավունք (ձայնի իրավունք),

բ) եկամուտ ստանալու, այսինքն ընկերության զուտ շահույթից շահութաբաժին ստանալու իրավունք,

գ) կապիտալի աճ, որը պայմանավորված է շուկայում բաժնետոմսերի գնի հնարավոր աճով:

դ) նոր թողարկումների դեպքում նախապատվության իրավունք,

ե) ընկերության լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունք:

Բաժնետոմսերը, կախված իրենց տերերին տրվող իրավունքների ծավալից, բաժանվում են՝ հասարակի և արտոնյալի: Ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի Ընկերությունը կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի

տեսակի արտոնյալ բաժնետոմսեր, ընդ որում Ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

Ընկերության յուրաքանչյուր հասարակ բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի մասնակցել ընկերության կառավարմանը, ստանալ շահութաբաժիններ՝ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից, ունենալ ընկերության գույքի իրեն հասանելիք մասը՝ ընկերության լուծարման դեպքում, առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, ինչպես նաև օգտվել ընկերության կանոնադրությամբ ու օրենքով սահմանված այլ իրավունքներից:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերն ընկերության բաժնետերերի ժողովում որպես կանոն ձայնի իրավունք չեն ստանում: Այս բաժնետոմսերի արտոնությունը կայանում է նրանում, որ ընկերության կանոնադրությամբ և թողարկման պայմաններով սահմանվում է բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինը, ինչպես նաև լուծարային արժեքը՝ դրամական տեսքով կամ անվանական արժեքի նկատմամբ, որպես տոկոսադրույք: Սակայն, ՀՀ օրենսդրության համաձայն առանձին դեպքերում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը կարող են օգտվել կառավարման իրավունքից, մասնավորապես, եթե բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկվում են ընկերության վերակազմակերպման և լուծարման կամ ընկերության կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցեր, որոնք սահմանափակում կամ փոփոխում են այդ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ նաև՝ այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը, ինչպես նաև այլ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի վճարման հերթականության արտոնությունների տրամադրումը: Արտոնյալ բաժնետոմսի տերը ձայնի իրավունք է ստանում նաև այն դեպքերում, երբ բաժնետերերի տարեկան ժողովում ընդունվում է սահմանված շահութաբաժինների չվճարման կամ ոչ լրիվ վճարման, կամ տվյալ դասի արտոնյալ բաժնետոմսերի հասարակ բաժնետոմսերի փոխարկման մասին որոշում:

Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարումը կարող է ընկերությունը դատական կարգով լուծարելու հիմք հանդիսանալ:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն արտոնյալ բաժնետոմսերի բազմաթիվ տեսակներ, որոնցից առավել լայն տարածում ունեն հետևյալները.

Հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերը, որոնց թողարկման պայմաններով կամ կանոնադրությամբ սահմանվում են դրանց դիմաց վճարվելիք շահութաբաժինների հաստատագրված չափ:

Չամրագրված կամ փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր, որոնցով կատարվող վճարումների, շահութաբաժինների չափը սովորաբար կախված է լինում որևէ ֆինանսական ցուցանիշից, (օրինակ՝ միջբանկային տոկոսադրույք, սպառողական զամբյուղի ինդեքս և այլն), ինչը բաժնետիրոջը հնարավորություն է տալիս ապահովագրվել տոկսադրույքների բարձրացումից, սղաճից, ազգային արժույթի արժեզրկումից և այլն:

Կուտակային (կումուլյատիվ) արտոնյալ բաժնետոմսեր, որոնք առավել տարածված են, և այս դեպքում եթե որոշակի ժամանակահատվածի համար շահութաբաժին չի կարող վճարվել, օրինակ աղբյուրի բացակայության պատճառով, ապա դրանց վճարման պարտավորությունը մնում է, դրանք կուտակվում են և վճարվում, երբ ընկերությունը կայունացնում է իր ֆինանսական վիճակը և առաջանում են աղբյուրներ շահութաբաժինների վճարման պարտավորությունների կատարման համար: Բացի այդ, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը ձեռք է բերում ձայնի իրավունք այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա չի ստացել շահութաբաժին և կորցնում է այդ իրավունքը՝ տվյալ բաժնետոմսով սահմանված շահութաբաժիններն ամբողջությամբ ստանալուց հետո:

Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը, որոնք իրենց սեփականատերերին իրավունք են տալիս թողարկումից որոշակի՝ թողարկման պայմաններով սահմանված ժամանակահատված անց փոխանակել նույն թողարկողի սովորական կամ այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսերով, որոշ դեպքերում նաև պարտատոմսերով:

Հետ կանչվող արտոնյալ բաժնետոմսեր, որոնք կարող են ընկերության կողմից հետ կանչվել, անկախ այն հանգամանքից, որ պարտքային արժեթղթեր չեն և չունեն մարման ժամկետ:

Շահույթի մասնակցությամբ արտոնյալ բաժնետոմսեր, որոնք ոչ միայն թողարկման պայմաններով ամրագրված շահութաբաժնի իրավունք են տալիս, այլ նաև թույլ են տալիս ստանալ լրացուցիչ, շահութաբաժիններ, եթե թույլ է տալիս թողարկողի ֆինանսական վիճակը:

Շահութաբաժնի դրույքի կարգավորմամբ արտոնյալ բաժնետոմսեր, որոնց շահութաբաժինը կապվում է շրջանառություն կատարող որևէ կարճաժամկետ արժեթղթի դրույքի հետ:

Երաշխավորված արտոնյալ բաժնետոմսեր, որոնց շահութաբաժնի վճարումը երաշխավորվում է երրորդ անձի կողմից, սովորաբար դա կատարում է մայր ընկերությունը՝ մեծացնելու համար դուստր ընկերությունների արժեթղթերի գրավչությունը:

Վաճառքի օպցիոնով բաժնետոմսեր, որոնք ներդրողին իրավունք են տալիս որոշակի ժամկետից հետո թողարկողին վաճառել դրանք՝ ձեռք բերման սկզբնական գնով:

Պարտատոմսեր

Պարտատոմսն արժեթուղթ է, որով հավաստվում են փոխառության հարաբերություններ՝ արժեթուղթը տիրապետողի (փոխատուի) և այն թողարկող անձի (փոխառու) միջև, այսինքն այն պարտատոմս թողարկողի և տիրապետողի միջև փոխառության հարաբերություն է:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պարտատոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը, կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ:

Այսպիսով, պարտատոմսը պարտքային պարտավորությունը հավաստող վկայական է, որը ներառում է թողարկողի հետևյալ պարտավորությունները՝

1. սահմանված ժամկետը լրանալուց հետո պարտատոմսում նշված գումարը պարտատոմս տիրապետողին վերադարձնելու մասին,

2. անվանական արժեքի նկատմամբ պարտատոմսում ամրագրված եկամուտը որոշակի տոկոսի կամ այլ գույքային համարժեքի տեսքով, պարտատոմսը տիրապետողին վճարելու մասին:

Պարտատոմսն արժեթուղթ է. այն պարզեցված ընթացակարգով կարող է փոխանցվել այլ անձանց: Այսինքն, դրա նկատմամբ սեփականության իրավունքը հեշտությամբ կարելի է փոխանցել, ինչը տարբերում է պարտատոմսը բանկային վարկից: Երկրորդ էական բնութագրիչն այն է, որ պարտատոմսը պարտքային գործիք է: Դրա սեփականատիրոջը չեն տրամադրում թողարկողի կառավարմանը մասնակցության իրավունք, և դրանով այն էականորեն տարբերվում է բաժնետոմսից: Եվ երրորդ կարևոր հատկանիշն այն է, որ պարտատոմսը ծառայում է որպես ֆինանսական շուկայում դրամական միջոցների ներգրավման աղբյուր: Վերջինս թույլ է տալիս ընդգծել պարտատոմսի և մուրհակի միջև տարանջատման սահմանը, քանի որ մուրհակը, հանդիսանալով պարտքային գործիք, այնուամենայնիվ շատ դեպքերում կատարում է հաշվարկային կամ ապրանքային վարկի գործառույթ, բայց ոչ ֆինանսական շուկայից միջոցների ներգրավման գործառույթ:

Ի տարբերություն բաժնետոմսերի, պարտատոմսեր թողարկողների շրջանակն ավելի լայն է: Պարտատոմսեր թողարկում է՝ պետությունը, տեղական ինքնակառավարման մարմինները և ընկերությունները:

Ներկայումս ՀՀ-ում առավել ակտիվ գործում է պետական պարտատոմսերի շուկան, թեև վերջին շրջանում կայացման և զարգացման միտումներ է դրսևորում նաև կորպորատիվ պարտատոմսերի շուկան:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն պարտատոմսերի բազմաթիվ տեսակներ, կախված յուրաքանչյուր երկրի օրենսդրությունից և զարգացման

առանձնահատկություններից: Ընդհանուր առմամբ պարտատոմսերը կարելի է դասակարգել՝ տարբեր հատկանիշներից ելնելով.

1. Ըստ թողարկողի պարտատոմսերը լինում են ՝

- պետական՝ որպես թողարկող հանդես է գալիս պետությունը,
- կորպորատիվ՝ որպես թողարկողներ հանդես են գալիս բոլոր տեսակի կազմակերպությունները՝ կորպորացիաները:

2. Ըստ փոխառության գոյության (մարման) ժամկետի պարտատոմսերը լինում են՝

- անփոփոխ մարման ժամկետով՝ երբ առկա է մարման կոնկրետ ժամկետ,
- փոփոխվող մարման ժամկետով, երբ թողարկման դեպքում հետգնման կոնկրետ ժամկետ չի սահմանվում, թեև դրանք որոշակի ժամկետ ունեն (օրինակ՝ հետկանչվող, վաղաժամկետ մարման իրավունքով, ժամկետի երկարաձգմամբ, ժամկետանց, չմարվող և այլն):

3. Ըստ ամրագրված իրավունքների պատկանելիության կարգի պարտատոմսերը լինում են՝

- անվանական, այսինքն պարտատոմսով ամրագրված իրավունքները պատկանում են այն անձին ում անունը նշված է արժեթղթի ձևաթղթի վրա և/կամ գրանցված է ընկերության կամ հատուկ մասնագիտացված անձի կողմից վարվող անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում,
- ըստ ներկայացնողի, այսինքն սեփականատիրոջ անունը նշված չէ պարտատոմսի ձևաթղթի վրա, շրջանառությունն իրականացվում է առանց որևէ գրանցման, իսկ ամրագրված իրավունքները պատկանում և հավաստվում են պարզապես պարտատոմսի ներկայացմամբ,

4. Ըստ գոյության՝ դրսևորման ձևի պարտատոմսերը լինում են՝

- փաստաթղթային կամ թղթային՝ տպագրական եղանակով, հատուկ պաշտպանված ձևաթղթի վրա պատրաստված, պարտատոմսերի պարտադիր վավերապայմանների պահպանմամբ,
- ոչ փաստաթղթային, որն հանդես է գալիս որպես միայն անվանական արժեթուղթ, այսինքն հատուկ գրանցամատյաններում (այդ թվում նաև էլեկտրոնային) գրառումների տեսքով:

5. Ըստ եկամտի ստացման ձևի պարտատոմսերը լինում են՝

- արժեկտրոնային (կուպոնային), որոնք տեղաբաշխվում և մարվում են անվանական արժեքով, իսկ եկամուտ է հանդիսանում պարբերաբար վճարվող աննուիտետը (կուպոնը),

- զրոյական արժեկտրոնով պարտատոմսեր, որոնք տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գնով, իսկ մարումը կատարվում է անվանականով,
- զեղչատոկոսային պարտատոմսեր, որոնք հանդիսանում են նշված երկու ձևերի համակցությունը:

6. Ըստ արժեկտրոնի հաշվարկման ձևի պարտատոմսերը լինում են՝

- հաստատագրված (ֆիքսված) տոկոսադրույքով պարտատոմսեր (այս տեսակի պարտատոմսերի վրա կոնկրետ նշվում է վճարվելիք տոկոսադրույքի չափը, այսինքն դրանք իրենց տերերին բերում են հաստատագրված եկամուտ),
- լողացող տոկոսադրույքով պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը կարող է պայմանավորված լինել որևէ ցուցանիշով՝ բանկային տոկոսադրույքով, սղաճի (ինֆլյացիայի) մակարդակով, և փոփոխվում է այդ ցուցանիշի փոփոխմանը համապատասխան,
- փոխառության տարիների ընթացքում հավասարաչափ աճող տոկոսադրույքով պարտատոմսեր: Այսպիսի պարտատոմսերը նաև կոչվում են ինդեքսավորվող և սովորաբար թողարկվում են բարձր սղաճի պայմաններում:

7. Ըստ ապահովվածության հատկանիշի պարտատոմսերը լինում են՝

- ապահովված, այսինքն պարտատոմսերի թողարկումն ապահովվում է որոշակի գրավով,
- չապահովված, այս պարտատոմսերը չեն ապահովվում որևէ սեփականության գրավադրմամբ,
- երաշխավորված, այս պարտատոմսերն ապահովված չեն գրավով սակայն փոխառությամբ պայմանավորված պարտատովությունների կատարումը երաշխավորված է, ոչ թե թողարկող ընկերության՝ այլ երրորդ անձի (անձանց) կողմից,

9. Ներդրումային ռիսկեր

Արժեթղթերում կատարվող ներդրումները առնչվում են հետևյալ ռիսկերի հետ:

1. վարկային (պարտքային) ռիսկ,
2. շուկայական ռիսկ.
3. գնային ռիսկ,
4. տոկոսային ռիսկ,
5. արժութային ռիսկ,
6. իրացվելիության ռիսկ,
7. գործառնական ռիսկ:

Վարկային ռիսկը գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է:

Շուկայական ռիսկը ֆինանսական շուկայում անբարենպաստ փոփոխությունների հետևանքով վնասներ կրելու ռիսկն է: Այն կազմված է երեք բաղադրիչներից՝ տոկոսային, արժութային և գնային ռիսկերից:

Արժութային ռիսկը արժութային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների, դրանց տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Տոկոսային ռիսկը փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Գնային ռիսկը ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փոփոխության, արժեթղթերի գների տատանողականության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Իրացվելիության ռիսկը գնված արժեթղթերը արագ և առանց լուրջ ֆինանսական կորուստների վաճառելու հնարավորության բացակայության հետ կապված ռիսկն է:

Գործառնական ռիսկը արժեթղթերով գործարքների կատարման ընթացքում տեխնիկական խնդիրների ի հայտ գալու հետ կապված ռիսկն է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ պատվերում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԸ:

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ն ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել իր կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:

10. Գործարքների իրականացման վայրերը

Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքներ կարող են կատարվել ինչպես կարգավորվող շուկաներում, այնպես էլ չկարգավորվող շուկաներում:

Կարգավորվող շուկայում գործարքները կնքվում և կարգավորվում են օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և շուկայի օպերատորի կողմից սահմանված կանոնների համաձայն:

Չկարգավորվող շուկայում գործարքները կնքվում և կատարվում են օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի համաձայն: Չկարգավորվող շուկայում

գործարքների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են մեր և հաճախորդի միջև կնքված և/կամ արժեթղթերի առքուվաճառքի պայմանագրերով:

11. Շահերի բախման կանխարգելումը

Այն դեպքում, երբ մենք հիմնավոր փաստերի հիման վրա հանգում ենք այն եզրակացությանը, որ

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի և հաճախորդի կամ տարբեր հաճախորդների միջև հաճախորդների պատվերների կատարման ընթացքում կարող է առաջանալ շահերի բախում, ապա անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաճախորդի պատվերի կատարման պահը, հաճախորդին տեղյակ է պահում այդ մասին՝ առաջարկելով շահերի բախումից խուսափելու եղանակներ:

Եթե հաճախորդը հրաժարվում է օգտագործել մեր կողմից իրեն առաջարկված շահերի բախումից խուսափելու եղանակները, իսկ շահերի բախումը կարող է առաջանալ տարբեր հաճախորդների միջև, ապա հաճախորդների պատվերները կատարվում են ըստ դրանց ստացման հաջորդականության, անկախ այն բանից, որ դրա արդյունքում հաճախորդներից որևէ մեկը կարող է տուժել: Այդ դեպքում համարվում է, որ մենք ձեռնարկել ենք բոլոր խելամիտ քայլերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով պատվերը կատարելու համար:

Եթե շահերի բախումը առաջանում է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի և հաճախորդի միջև, ապա հաճախորդի պատվերը կատարվում է այնպես, որպեսզի դրա արդյունքում տուժի ոչ թե հաճախորդը, այլ « Ինվիա Ինվեսթմենթս » ՓԲԸ-ն:

12. Բրոքերային հաշիվների բացումը

Մեր բրոքերային ծառայություններից օգտվելու համար հաճախորդները պետք է մեզ մոտ բացեն բրոքերային հաշիվ, որի համար պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

Ֆիզիկական անձինք

- անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
- սոցիալական քարտի պատճեն (առկայության դեպքում),
- անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և հարկային հաշվառման վերցնելու փաստաթղթի (ՀՎՀՀ – Հարկ Վճարողի Հաշվառման Համարը) պատճենները,
- ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին տեղեկատվություն՝ ընկերության գլխավոր տնօրենի սահմանած ձևով:

Իրավաբանական անձինք

- պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճեն,

- հարկային հաշվառման վերցնելու փաստաթղթի (ՀՎՀՀ – Հարկ Վճարողի Հաշվառման Համարը) պատճեն,
- կանոնադրության պատճեն,
- գործադիր մարմնի ընտրման կամ նշանակման մասին որոշման պատճենը (կոլեգիալ գործադիր մարմնի դեպքում՝ դրա անդամների և ղեկավարի ընտրումը կամ նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը),
- գործադիր մարմնի անդամների համար ֆիզիկական անձանցից պահանջվող փաստաթղթերի պատճենները,
- ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին տեղեկատվություն՝ ընկերության գլխավոր տնօրենի սահմանած ձևով:

Սույնով հաճախորդը հավաստիացնում է, որ ծանոթացել է սույն տեղեկատվական ամփոփագրին:

Հաճախորդ՝ անուն ազգանուն ———————————— ---- թ.